

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 1 Մարտ. — Նախատեսակը պաշտու-
նացաւ Մայրաքաղաքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ,
որ նոյն անունը Զեռագրատան Տեսուչի
Յանգիստայեան էր Զեռագրատան Տեսուչի
Յանգի. Տ. Նորայր Եղաւ:

● Շր. 2 Մարտ. — Ս. Թեոդորոսի զօրավարին:
Առաւտեան ժամերգութիւնը պաշտուցեցաւ և
Ս. Պատարագը մատուցուցեցաւ Ս. Թորոս եկե-
ղեցւոյ մէջ: Ժամարարն էր Զոգչ. Տ. Արշակ
Արզ. Խաչատուրեան:

— Կէսօրէ ետք ժամը 3ին, Ամեն. Ս. Պատ-
րիարք Զոր գլխաւորութեամբ, Միաբանու-
թիւնը շարաշափառում մուտք գործեց Ս. Յա-
րութեան Տաճար, որ պաշտուցեցան ժամեր-
գութիւնն ու նախատեսակը Ս. Լուսաւորիչ ե-
կեղեցւոյ մէջ: Ապա կատարուեցաւ Տնորինա-
կան Սրբատեղեաց աշխարհիկան հանդիսաւոր
Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր
Զոգչ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:

● Կիր. 3 Մարտ. — Արքեպիսկոպոս: Գիշերային
և առաւտեան ժամերգութիւնները պաշտու-
ցան և Ս. Պատարագը մատուցուցեցաւ Ս. Յա-
րութեան, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժա-
մարարն էր Զոգչ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:
Ապա կատարուեցաւ մեծահանդէս Թափօր մեր
Տիրոջ Ս. Գերեզմանին և Պատանաւորացն
չուրջ: Թափօրապետն էր Ամեն. Ս. Պատրիարք
Զոգչ. Տ. Նորայր Եղաւ:

● Եւ. 7 Մարտ. — Իրիկեան Զնկումին քա-
րողեց Գերշ. Տ. Նորայր Եղաւ, բնարան ունե-
նալով: Զնկումինութիւնս իմ ես ինձէն գիտեմ
և մեղք իմ առաջի իմ եմ յամենայն ժամ:
Ըսաւ իմ մեղքը հիւանդութիւնն է հոգիին:
Ինչպէս որ մենք հոգածու ենք մեր մարմինն
առողջութեան, նոյնպէս պէտք է որ հոգածու
ըլլանք մեր հոգիին առողջութեան, հեռու
պահելով դայն մեղքերէ: Սակայն մարդ միշտ
հակամէտ է մեղանշելու: Ասոր համար եկե-
ղեցին սահմանած է կանխարգելիչ և բուժիչ
միջոցներ, առաջիններով զգուշանալու համար
մեղքերէն իսկ վերջիններով մարբուելու հա-
մար անոնցմէ: Եւ մեծ Պաշքը յարմարագոյն ա-
ռիթմ է դադար բնելու: Ճշմարիտ Քրիստոնեա-
լին կեանքը յարատե պայքար մը պէտք է
ըլլայ մեղքին դէմ:

● Շր. 9 Մարտ. — Ս. Կիրիլի երեսօղիմայ
հայրապետին: Ս. Պատարագը մատուցուցեցաւ
Մայր Տաճարի Աւանդատան Ս. Կիրիլի սեղա-
նին վրայ: Ժամարարն էր Զոգչ. Տ. Գեղամ
Արզ. Զարարեան:

● Կիր. 10 Մարտ. — Անտառիկին: Ս. Պատա-
րագը մատուցուցեցաւ Ս. Զրեշտակապետ:

Ժամարարն էր Զոգչ. Տ. Կամիտաս Արզ. Պատ-
ուէրեան: Քարողեց Զոգչ. Տ. Արշակ Արզ. Խա-
չատուրեան, մեկնարանելով Անտառիկի աւե-
տարանական առակը, բնարան ունենալով
«Զի Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին, այլ
զգառնայն նորա ի շար հանապարհէն և րդ-
կեայն»:

● Եւ. 14 Մարտ. — Իրիկեան Զնկումին
քարողեց Գերշ. Տ. Սարգիս Արքեպոս, բնարան
ունենալով: «Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է
արքայութիւնն երկնից» և շեշտելով ապաշ-
խարութեան դերն ու կարեւորութիւնը Քրիս-
տոնեայ հաւատացեալներու կեանքին մէջ:

● Կիր. 17 Մարտ. — Տնկումին: Ս. Պատա-
րագը մատուցուցեցաւ Մայր Տաճարի Ս. Կարա-
պետի խորանին վրայ: Ժամարարն էր Զոգչ.
Տ. Վաչէ Արզ. Իգնատիոսեան:

● Եւ. 21 Մարտ. — Իրիկեան Զնկումին
քարողեց Զոգչ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան,
բնարան ունենալով: «Նարեկ՝ Ազօթամատեա-
նէն «Որ լսես զհեծութիւն կապելոյց և հայիս
յազօթս խոնարհաց: Ըսաւ իմ մարդ միշտ
հակամէտ է մեղանշելու, և սակայն միշտ ալ
իրեն տրուած է միջոցը, կարելիութիւնը, իր
մեղքերէն սրբուելու: Եւ մեծ Պաշքը յաւազոյն
պատահութիւն մըն է ապաշխարութեամբ մեր
մեղքերէն մարբուելու: Զոգչ. Զարարեայր ցոյց
տուաւ նաեւ ծոմապահութեան ու պահեցողու-
թեան օգուտները, իմ՝ հոգեկան և իմ՝ քիզի-
քական առեւտններէ:

● Շր. 23 Մարտ. — Ս. Գառնաւոր մանկանց
Սերապիմ: Ս. Պատարագը մատուցուցեցաւ Ս.
Գլխապիր: Ժամարարն էր Զոգչ. Տ. Արշակ Ա-
րքեպոս Խաչատուրեան: Վերաբերումը կատար-
ուեցաւ Տաճարի աւագ դրան մօտ գտնուող
Ս. 40 մանկանց պատկերին ստորոտը շինուած
շարժական Սեղանին վրայէն, որուն դիմաց,
սառցապատ աւանդական լիճք խորհրդանշող
Ջրովից կաթնային մէջ կը պղպային քառա-
սուն գոյնզգոյն կանխելներ:

— Կէսօրէ ետք ժամը 2.30ին, Ամեն. Ս.
Պատրիարք Զոր գլխաւորութեամբ, Միաբա-
նութիւնը շարաշափառում մուտք գործեց Ս.
Յարութեան Տաճար: Պատանաւորացն, Ս. Գե-
րեզմանի և Գիւտ Թաշի այրի ուխտարէն ետք,
ժամերգութիւնն ու նախատեսակը պաշտու-
ցան Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա
կատարուեցաւ Տնորինական Սրբատեղեաց աշ-
խարհիկան հանդիսաւոր Թափօր Տաճարէն
ներս: Թափօրապետն էր Զոգչ. Տ. Յովսէփ
Վրդ. Մամաւոր:

● Կիր. 24 Մարտ. — Գաւառիկին: Գիշերային
և առաւտեան ժամերգութիւնները պաշտու-
ցան Ս. Լուսաւորիչ: Ապա, Ամեն. Ս. Պատ-
րիարք Զարարեան հանդիսաւոր Ս. Պատարագ մա-
տուց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որմէ
ետք նախապահեց նոյնին և Պատանաւորացն
չուրջ կատարուած մեծահանդէս Թափօրին:

● ԵՂ. 28 Մարտ. — Իրիկուան Հսկումին քարոզիկ Նոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր, բնարան ունենալով «Արթուր» կացէք եւ աղօթարարէք՝ զի մի՛ անկանիցիք ի փորձութիւնս, եւ յայտնեց թէ ճշմարիտ Գրիստոնեային աստեոր կեանքը պատրաստութիւն մը պէտք է ըլլայ յաւիտենական կեանքին համար:

● Ուր. 29 Մարտ. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.:

● Եր. 30 Մարտ. — Ս. Գրիգորի Լուսաւորչին (Մոսկի Վիքայ): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութիւնէն ետք, Ս. Լուսաւորչի մատենքը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Նոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

— Կէսօրէ ետք, հակառակ փոթորկոտ օդին, Միարանութենէն մաս մը, Նոգչ. Տ. Յակոբ Վրդ. ի գլխաւորութեամբ, ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբատեղւոյն վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատեսակ: — Գիշերասկիզբին պաշտուեցան նաեւ Եկեղեցիի եւ Հսկման կարգեր, ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: Ամենէն վերջը մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Ս. Աստուածածնայ Տաճարի Տեառնը (որ նոյն ատեն Տեսուչն է Համբարձման Սրբավայրին), Նոգչ. Տ. Վաչէ Արդ. Իգնատիոսեան: Արարողութիւնները աւարտեցան ուշ գիշերին:

● Կիր. 31 Մարտ. — Գալստեան: Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. ի գլխաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբատեղւոյն վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատեսակ: — Գիշերասկիզբին պաշտուեցան նաեւ Եկեղեցիի եւ Հսկման կարգեր, ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: Ամենէն վերջը մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Ս. Աստուածածնայ Տաճարի Տեառնը (որ նոյն ատեն Տեսուչն է Համբարձման Սրբավայրին), Նոգչ. Տ. Վաչէ Արդ. Իգնատիոսեան: Արարողութիւնները աւարտեցան ուշ գիշերին:

խաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիթենեաց լեռ ու շրջափառով մօտեք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատարան մէջ, եպիսկոպոսական խոյր ի գլխաւոր, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Նոգչ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան եւ քարոզիկ, բնարան ունենալով Մատթէոսի Աւետարանին վերջին համարը: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ դամենայն աւուրմինչեւ ի կատարած աշխարհիս, եւ բացատրեց Համբարձման խորհուրդին արժէքն ու զերբ քրիստոնեական կրօնի ու մեր կեանքին մէջ: Քարոզէն ետք, Գերշ. Լուսարարապետ Սրբազանին նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան հանգիստաւոր պաշտամունք Սիրիկեան Աթոռին Հայրապետ Երջանկայիշատակ Տ. Տ. Զարեհ Ա. ի հոգւոյն համար, անոր վախճանման քառասունքին առթիւ:

ՊԱՇՏՈՆ ԱԿԱՆՔ

● Ուր. 8 Մարտ. — Գերշ. Տ. Սուրէն Արք. եպս. Քէմհանեան Ս. Աթոռ վերադարձաւ իսթանպուլէն, ուր մեկնած էր անցնող տարւոյ նոյեմբերի 24ին: Գերշ. Սրբազանը հոն ներկայ եղած է Դեկտեմբերին կատարուած Պոսոյ Հայոց Պատրիարքութեան հաստատման 500 ամեակի հանդիսութեանց: Իսկ վերադարձին, Պէյրութի եւ Անթիպիասի մէջ, մասնակցած է երանաշնորհ Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի վերջին օծման եւ թաղման կարգերուն:

● Եր. 30 Մարտ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մեկնեցաւ Անթիպիաս, նախագահելու համար Սիրիկեան Աթոռի երանաշնորհ Հայրապետ Տ. Տ. Զարեհ Ա. ի մահուան քառասունքի հանդիսութեանց: Վերադարձաւ Եր. 6 Ապրիլին:

ԶԵԿՈՅՑ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Կրթաքոնակ 1963-64 Տարեդասինի համար

1. — Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը յիստուն լման նոր կրթաթոշակներ պիտի յատկացնէ Սփիւռքի Հայ ուսանողներուն, 1963-64 տարեշրջանին համար:

2. — Կրթաթոշակները բնարութեան հիման վրայ պիտի յատկացուին հայկական ծագում ունեցող ուսանողներու, ինչ ալ ըլլայ իրենց հոգատակութիւնը, որոնք նախական միջոցէ զուրկ են բարձրագոյն ուսման հետեւելու իրենց բնական երկրին կամ մօտակայ երկրի մը կրթական հաստատութիւններու մէջ: Կր հետեւի որ Հիմնարկութիւնը սկզբունքով չի փափաքիր հովանաւորել այն ուսումները որոնք կը կատարուին հեռուոր համալսարաններու մէջ: Միայն շատ բացառիկ պարագաներու տակ, երբ հետապնդուած ուսումները չեն կրնար ստացուիլ տեղական կամ մերձաւոր հաստատութիւններու մէջ, կրթաթոշակներ կը յատկացուին արտասահմանեան հաստատութիւններու համար:

3. — Թեկնածուները պէտք է աւարտած ըլլան իրենց երկրորդական ուսումը եւ որակաւ համալսարանի մը մէջ արժանագրուելու համար: Թեկնածուները երկրորդական ուսում